

կամանները: Չանոնք կը ստիպեն քալել էչուն ետեւէն: Յետոյ էչէն կ'իջեցնեն ու զինքը ծունկի կը ստիպեն հոն Պիթպաղաւրի մէջ եւ սուրի մէկ հարուածով անոր գլուխը կը կտրեն: Գլուխը մարմինէն ալսպէս բաժանեալ, հայ բեռնակիրներու բեռցուած, քահանաները կը ստիպուին հետեւիլ, երգելով՝ Գրգըլպաշներուն դէմ՝ ըստ իրենց ցանկութեան, իրենց մեռելներուն վրայ երգուած եղանակին նըմանութեամբ»26):

Նկարագրելով թրքական կանանոցի կեանքը, ուղեգրիւ կը վկայէ, որ հրեայ եւ հայ մանրավաճառուհիները, որոնք լաթեղէն եւ ուրիշ մանր իրեր կը վաճառեն կանանոցի բնակչուհիներուն, նոյն ատեն կը կատարեն դադանի թղթարերի պաշտօն սիրահարներու միջեւ27):

1703-ի Նոյեմբերի կէսերուն Հայոց Աւետիք Եւզոկիացի պատրիարքը անհետացած էր արդէն: «Ոչ ոք զիտէր թէ ի՞նչ պատահած էր Հայոց պատրիարքին, որու մասին նախապէս ալ յիշած եմ: Ոմանք կ'ըսէին, որ Յիսուսեանները զայն առեւանդած են: Ուրիշներ ալ թէ՛ Մուֆթիին դրամներէն նկատելի քանակ մը իր մօտ ունենալուն, պահուրտած է: Այսուհանդերձ ոչ ոք կրնար ենթադրելէ զատբան մը ըսել, բացի անոնցմէ, որոնք մատուէին զինքը առեւանդելու եւ պահելու գործին մէջ: Եւ Սառի վարդապետը պատրիարք ընտրուեցաւ անոր տեղ: Ժամանակի մը համար հայ եկեղեցին անխառնակ մնաց»28):

Հոս յիշուած Սառին Մատթէոս վարդապետ Սառին (Դեղին) է, որուն պատրիարքութիւնը ջնջել կ'առաջարկէ Օրմանեան (Ազգապատում, էջ 2735), պատճառարանելով, որ Սառին պատրիարք եղած ըլլալու չէ: Սակայն, Սառիի պատրիարքութիւնը 1703 Նոյեմբերի կէսե-

րուն կը հաստատուի այս ուղեգրին որոշ վկայութեամբ իսկ:

1704-ին «Պատրիարք Աւետիք անհետացած ըլլալով եւ ուրիշ մը, Յիսուսեաններու համակիր Տէր Յովհաննէս Սառի իրեն յաջորդած ըլլալով, ինչպէս նաեւ կաթողիկոսներու կուսակցութեան զլխաւոր թշնամի Եփրեմ եպիսկոպոս մեռած ըլլալով, հաւատարմութիւնը յաջողութեամբ յառաջ տարուեցաւ, թէեւ նախկինէն աւելի զգուշութեամբ: Հակակաթողիկ վարդապետները, որոնք կարճ ժամանակ անտարբեր ձեւացան, լռելեայն դիտեցին անոնց միջոցները՝ թշնամին աւելի ապահով հարուածելու, ապա իրենց դանդատները Գրան ներկայացուցին՝ դիտել տալով, որ հակառակ քանի մը խաբբը շէրիֆներու, բազմաթիւ հայեր իրենց եկեղեցին կը լքեն Փրանկ դառնալու համար, իսկ Յիսուսեանները (Բարա Փափաղար) կը շարունակեն իրենց հրապուրանքները, (գործածելով իրենց իսկ արտայայտութեան ձեւը) եւ կը պահեն Բերայի մէջ Փրանկ տպագրիչ մը, որ քանի մը տարիէ ի վեր հայերէն բազմաթիւ գրքեր տպած է իրենց այդ նպատակին համար՝ դժուարութիւններ ու հերձուածներ խմորելով իրենց հօտին մէջ, որոնց մէջ այդ գրքերը կը ցրուէին: Ասոր վրայ վեգիբը կաթողիկ եկեղեցիներուն դռներուն առջեւ պահակներ զետեղեց, նման Սուլթան Մուստաֆայի ժամանակ կատարուածին: Չեմ զիտեր թէ՛ տպագրիչը վախնալուն, թէ՛ սպանալիքի պատճառաւ, դադրեցուց իր մամուլը ժամանակի մը համար»29):

Նախ՝ մեր ուղեգրիւ կը սխալի՝ Սառին Տէր Յովհաննէս կոչելով: Սառիի անունը Մատթէոս էր: Հաւանաբար Տէր Յովհաննէսը Չմիւռնիացին էր Աւետիքի պատրիարքութեան անոր փոխանորդը: Որոշ է, որ հոս անունի շիթութեան մը զոհ եղած է ան:

«1707 Յունուարի 2-ին կամ 3-ին:

26) Անդ՝ էջ 245:

27) Անդ՝ էջ 254:

28) Անդ՝ էջ 255:

29) Անդ՝ էջ 261-262: